ՀՏԴ 581.5

ԼԵՌՆԱՅԻՆ ԱՐՑԱԽ ՖԼՈՐԱՅԻ ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ԵՎ ԱՆՀԵՏԱՑՈՂ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Ռ.Ի.Առուշանյան
կենսաբանության ամբիոն

Լեռնային Արցախի հարուստ ֆլորայի պահպանությունը, նրա ռեսուրսների օգտագործումը և վերարտադրությունը գտնվում է ծայրահեղ անմխիթար վիճակում, բնաջնջվում են թանկարժեք անհետացման վտանգի տակ գտնվող բույսատեսակները: Վիճակը շտկելու համար հարկավոր է ստեղծել «Կարմիր գիրք»՝ իր կանոնակարգով:

Լեռնային Արցախի հանրապետությունը համարվում է մեր մոլորակի այն սակավաթիվ և յուրօրինակ անկյուններից մեկը, որը աչքի է ընկնում բուսականության մեծ բազմազանությամբ: Հարստության և բազմազանության մասին վկայում է այն փաստը, որ եթե նախկին ՍՍՀՄ-ի յուրաքանչյուր 1000 քառակուսի կմ. վրա հանդիպում է ընդամենը 0,7 տեսակ, իսկ Հայկական Հանրապետությունում՝ 118, ապա Լեռնային Արցախի համար այդ ցուցանիշը կազմում է ավելի քան 450: Հանրապետության ֆլորան ընդգրկում է մոտ 2000 բուսատեսակ:

Հանրապետության հեքիաթային հարուստ ֆլորան, բացի բնավայրային ծառատեսակներից ընդգրկում է բազմաթիվ պտղա-հատապտղային ծառատեսակներ ինչպիսիք են վայրի տանձենիները, խնձորենիները, ընկուզենին, արջատխլենին, սիսլենին, ծտատանձին, հոնին, սալորենին, զկռենին, արուսենին, չիչխանը, մոռին, մոշին, ալոճենին, հաղարջենին և այլ բույսեր: Քիչ չեն այստեղ վայրի աճող բանջարաևոցային բույսերը և դեղաբույսերը, որոնք անհիշելի ժամանակներից օգտագործում է դարաբաղցին: Այստեղ քիչ չեն նաև սպորավոր բույսերը՝ ջրիմուռները, սնկերը, քարաքոսերը, մամուռները և պտերները, որոնց տարածման արեալները դեռևս ճշգրիտ չի պարզաբանված:

Ցավոք, հանրապետության բուսական աշխարհի պահպանության գործը անմխիթար հիմքի վրա է դրված: Շարունակվում է հանրապետության հարուստ ֆլորայի գենոֆոնդի անխնա ոչնչացումը: Բացառիկ պաշտպանական նշանակություն ունեցող անտառների մասսայական բնաջնջումը,տարեց-տարի կրկնվող տարածքների հրդեհումը (ցանքատարածություններ, խոտահարքեր, արոտավայրեր և անտառներ), անասունների անսիստեմ արածացումը հանգեցրել է բազմաթիվ ծառաթփատեսակների, դեղաբույսերի և այլ բույսերի անհետացմանը: Անհետացել են ոչ միայն եզակի անհետացող տեսակները, այլև բնական յուրօրինակ բուսական համակեցություններ բազմաթիվ մնացորդային (ռելիքտ) բույսերի մասնակցությամբ, ինչպես օրինակ Մարտակերտի շրջանի նախալեռնային գոտու պիստակենու լուսավոր անտառները, արևելյան հաճարենու խառն անտառը, որի երկրորդ շարահարկը զբաղեցնում է կենի կարմրաձառը, իսկ երրորդ շարահարկը՝ վիշարմավր / մի մշտադալար բույս, որը աճում է միայն մեզ մոտ և Վրաստանի կոլխիդայում/ ձեկկվայի խառն անտառները միջին լեռնային և կաղնուտները միջին և բարձր լեռնային գոտիներում: Անհետանում են համաշխարհային հանրության հայտնի արևելյան սոսենու պուրակները և կենի կարմրաձառի պուրակները և անտառները Մարտակերտի և Զանգելանի շրջաններում: Օրեցօր կրճատվում են դարավոր կուսական անտառների տարածքները, որտեղ աճում

են պիստակենին, ձելկվան, արջատխլենին, արևելյան սոսենին, վայրի տանձենին, հայկական, պարսկական և Կովկասյան արուսենիները, արևելյանսգենին, կենիկարմրածառ, չիչխանը, բռնչին, կեչին, փշարմավը, դեղաբույսերից՝ շիկատակը, անմեռուկը, կատվալեզուն, կատվախոտը, հազարտերևուկը և այլ բույսեր: Հաշվի առնելով հանրապետության բուսածածկի անմխիթար վիճակը, արժեքավոր բուսատեսակներին և կենսաերկրահամակեցությունների անհետացումը, եղած բույսատեսակների և բուսածածկի տարածքների խնամքի և պահպանության անհրաժեշտությունը, հարկավոր է հաստատել հանրապետության «Կարմիր գիրք»: Քանի որ հանրապետությունում ոչ մի աշխատանք չի տարվում ֆլորայի եզակի և անհետացող բուսատեսակների ցուցակները և «Կարմիր գիրք»-ը ստեղծելու համար, նպատակահարմար է ընդունել կառավարական որոշում հանրապետության տարածքում հունական ընկուզենին, կովկասյան փռշնին, պիստակենին, արջատխլենին, լիտվինովի կեչին, բռնչին, տանձենին, սովորական շագանակենին, հայկական, հունական և կովկասյան արուսենիները, վայրի ածող խնձորենին, սալորենին, գկռին, հոնին, կծոխուրը, կենի կարմրածառը, գիհին, ձելկվան, արևելյան սգենին, իլենին, կաղնի շագանակենու տերևավոր փշարմավը, ուռենին, թզենին, սրնգենին, թանթրվենին, վայրի կեռասենին, չիչխանը, սև և կարմիր հաղարջենին, մոռին, դրախտածառը, մատուտակը, պեքին, կատվախոտը, կատվալեզուն, անմեռուկը, հազարտերևուկը համարել մտցված «Կարմիր գրքի» մեջ: Նշված որոշմանը հատուկ կետով պետք է բացառվի այդ բուսատեսակների հատումները: Բացառիկ դեպքերում կառավարական հատուկ կարգադրությամբ որոշվում է բույսատեսակի տեսը, հատման ենթակա բույսի տեսակը, ծառերի քանակը և ծավալը:

Ամփոփում

Լեռնային Արցախը տարբերվում է հեքիաթային հարուստ ֆլորայով: Վերջին տարիներին իրականացվում են գիտականորեն չհիմնավորված բուսատեսակների զանգվածային հատումներ այդ թվում բնակարծեք անհետացման վտանգի տակ գտնվող բույսեր: Երաշխավորվում է իրավիճակը շտկելու համար ստեղծել «Կարմիր գիրք» իր կանոնակարգով:

Резюме

Горный Арцах обладает богатой флорой. В последние годы проводятся научно необоснованные массовые вырубки различных видов растений, в том числе, находящиеся под угрозой исчезновения, ценные породы. С целью выправления ситуации рекомендуется создать "Красную книгу" с ее уставом.

Գրականություն

1. Р.И.Арушанян,Автореферат диссертации на соискание ученой степени кандидата биологических наук.
2. З.А.Ванин, Дендрология. Гослесбумиздат, Москва-Ленинград, 1960г.
4. Б.В Гроздов, Дендрология, Гослесбумиздат, Москва-Ленинград, 1952г.